«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<Բարոյական արժեքներ>>

Առարկան՝ Գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Օսիպյան

Ուսումնական հաստատություն՝ Չարենցավանի Ս. Ավանյանի անվան N 4 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն----------էջ 3-4

Բարոյական արժեքների ընդհանուր բնութագիրը-----էջ 5-7

Բարոյական արժեքների ձևավորումը գրականության դասերին-էջ 8- 12

Եզրակացություն----------էջ 13

Գրականության ցանկ----------էջ 14

Ներածություն

«Մեր ժամանակներում մարդիկ գիտեն ամեն ինչի գինը, սակայն չգիտեն ոչ մի բանի արժեքը»:

Օսկար Ուայլդ

Հետազոտական աշխատանքս կրում է «Բարոյական արժեքներ» վերնագիրը: Ընտրություն կատարելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը, նաև՝ այն, որ այսօր մենք ամեն քայլափոխի նահանջում ենք ազգայինից, մարդկայինից, բարոյականից, բարուց, գեղեցիկից՝ կամա, թե ակամա, գիտությամբ, թե անգիտությամբ:

Մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Հանրակրթության գլխավոր նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Այսինքն՝ առանցքային է համարվում սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումը, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ:

Երեխաները դպրոց են գալիս տարբեր ընտանիքներից, և նրանց համար ընդունված արժեհամակարգային չափանիշը պայմանավորված է իրենց միջավայրով: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: ՈՒսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Մեր հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական, ազգային, հասարակական նորմերի ճիշտ արժևորումը և սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը: Յուրաքանչյուր ուսուցչի առաքելությունն է կրթել և դաստիարակել մարդ՝ հայրենիքիի և պետության արժանապատիվ քաղաքացի, համամարդկային, ազգային և բարոյական արժեքներն իր մեջ կրող անհատ: Անձի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում է ճշմարտությունը և սերը: Ի սկզբանե երեխայի մեջ պետք է սերմանել սերը, իսկ

ժամանակի ընթացքում այդ սերը պետք է մեծացնել և ավելացնել: Կարևոր արժեքներ են ճշմարտությունը, բարին և գեղեցիկ:

Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք ձևավորում են նրա ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը, գոյության և զարգացման երաշխիքը: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական և բովանդակային բազմաթիվ փոփոխություններ մարտահրավերներ են ստեղծում արժեքային համակարգում՝ հակադրելով ազգային ավանդական արժեքներին համաշխարհային արժեքները: Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվում են հետին պլան, դյուրանում են համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս բացասական ազդեցություն են ունենում երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի և արժեհամակարգի վրա: Շատ են փոխվել արժեքային պատկերացումները*: Ազգային արժեքները օր օրի մղվում են հետին պլան, վտանգում մշակութային ինքնությունը՝ այն խոցելի դարձնելով: Հետևաբար, այսօր պետության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից քաղաքական և տնտեսական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն և հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը:*

Մեր ժողովրդի համար ճակատագրական այս օրերին առավել, քան երբեք պետք է կարևորենք երեխաների ազգային կրթությունը և դաստիարակությունը՝ արժևորելով մարդկայինը, ազգայինը և համամարդկայինը:

Բարոյական արժեքներ

Բարոյական արժեքները հասարակության բարոյական հարաբերությունների դրսևորման ձևերից են։ Արժեք ասելով հասկանում ենք անհատի և նրա արարքների բարոյական նշանակությունը կամ հասարակական հաստատությունների բնութագրերը, արժեքային պատկերացումները, որոնք վերաբերում են բարոյական գիտակցության բնագավառին, բարոյական նորմերը, սկզբունքները, իդեալները, բարու և չարի, արդարության, երջանկության հասկացությունները։ Մարդկանց արարքները որոշակի բարոյական նշանակություն ունեն այն պատճառով, որ նրանք ներգործում են հասարակական կյանքի վրա շոշափում մարդկանց շահերը, ամրապնդում կամ խարխլում են գոյություն ունեցող հասարակության հիմքերը, նպաստում կամ հակազդում սոցիալական առաջադիմությանը։*

«Բարոյական արժեք» ասելով հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, ուսուցումները, որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը: Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևոր-բարոյական արժեքները: Առօրյա իրականության մեջ հաճախ ենք առերեսվում բարոյական արժեքների կորստի հետ: Հասարակությունը շատ հաճախ անբարոյականություն ասածն ընկալում է նեղ իմաստով, այն հաճախ նույնացվում է բարոյական ազատ վարքագծի հետ: Սակայն ճշմարտությունն այն է, որ անբարոյական ասածը շատ ավելի ընդգրկուն է: Մարդը բնության մասնիկն է, կենդանիները՝ ևս: Սակայն, եթե մարդիկ ուղղորդվում են բնական բնազդով, ապա անպատասխան կմնա «Ո՞րն է մարդկանց և կենդանիների տարբերությունը» հարցադրումը: Այդ տարբերություն ասվածը հենց բանականությունն է ու բարոյական արժեքները, ինչը մեր օրերում կարծես երկրորդ, նույնիսկ երրորդ պլան է մղվել:Բարոյական արժեքների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և իրականացվում նրա ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացին մասնակցում են ընտանիքը, միջավայրը, եկեղեցին, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները նաև՝ հանրակրթական դպրոցը:**

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և տեղեկությունների, այլև սեփական կենսափորձի հիման վրա։

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ։ Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է։ Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են հավատն ու սերը։

Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու։ Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար։

*- Բարոյագիտական բառարան, խմբագրությամբ Ի. Կոնի, 1985թ., էջ 42/

**-Ա. Ահարոնյան, «Վարքի կուլտուրա», 1981թ. , էջ 8

Մարդիկ քանի դեռ ապրում են, հավատում են, քանի դեռ հավատում են,ապրում են:

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է:

Կան նաև սիրո առանձնացված դրսևորումներ: Օրինակ՝ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական:

Հաջորդը սերն է հավասարների միջև, երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես: Օրինակ՝ եղբայրական սերը:

Սերն անհատական ընտրողական զգացում է, որը դրսևորվում է խորը և կայուն ապրումներում: Այն խիստ անհատական և անկրկնելի ապրում է: Ամեն մեկը յուրովի է սիրում: Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման:

Սիրո բարձրագույն արտահայտություն են **հայրենասիրությունը, ազգասիրությունը, մարդասիրությունը:**

Բարոյական արժեք է **ճշմարտությունը,** հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից, ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի (որի կրողը նա համարում է ճշմարիտը), գործնականի (բարին), գեղարվեստականի (գեղեցիկը): Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Եթե Արիստոտելն առաջնորդվում էր <<թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են << թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է>> սկզբունքով:

Լավագույն հատկանիշները՝ **չափի զգացողությունը, ճիշտ վարքագիծը, սիրալիրությունը, անմիջականությունը, մարդասիրությունը** դառնում են մարդու վարվելակերպի չափանիշներ և բարոյական արժեքներ:

Քաղաքավարությունը մարդու նկատմամբ մարդու վերաբերմունքի արտահայտության ձև է: Քաղաքավարի մարդն ուշադիր է ուրիշի կարծիքի, ճաշակի, սովորույթների նկատմամբ, ձայնը չի բարձրացնում ենթակաների կամ անծանոթ մարդկանց հետ խոսելիս, թույլ չի տալիս նվաստացնել ուրիշի արժանապատվությունը, օգնում է դժվար իրավիճակի մեջ ընկած մարդկանց:

Համեստությունը ուրիշ մարդկանց ճանաչելու, նրանց ընդունելու ձև է, հասարակության մեջ իր դերի գնահատումը և սեփական անձի իրական նշանակության գիտակցումը: Համեստ մարդը չի ձգտի իրեն վեր դասել ուրիշներից:

Մարդը պետք է հարգի դիմացինի արժանիքները, գիտելիքները, մտավոր կարողությունները, հասկանա նրա տրամադրությունը, բնավորությունը, կարողանա ղեկավարել իր արարքները, քննադատորեն վերաբերվել իր գործնական հատկանիշներին և վարվելակերպին։*

Ազնվությունը բարոյական արժեքն է, որը կարողանում է չափել անկեղծության մակարդակը, որին մարդը տիրապետում է:

Հանդուրժողականությունը ուրիշների գաղափարները, համոզմունքները և տեսակետները հարգելն է, նույնիսկ եթե համաձայն չես դրանց հետ:

Վստահությունը բարոյական արժեք է, որին դժվար է հասնել և շատ հեշտ է կորցնել, եթե հավատարմությունը կամ հավատարմությունը կոտրվում են հպատակի վատ արարքներով: Ուրիշին վստահելը երբեք դավաճանություն չստանալու և անհատի վրա անվերապահորեն հույս դնելու հույսն է: Դժվար է վստահել, երբ առկա է այլ արժեքների խախտում, բայց դա անելը մեծ սիրալիրություն է, եթե ներգրավված անձը շատ լավ համապատասխանում է այդ վստահությանը:

Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:

Ազգային արժանապատվությունը սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման:

Այսպիսով, պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը:

*Ա. Ահարոնյան, «Վարքի կուլտուրա», 1979թ.

Բարոյական արժեքների ձևավորումը գրականության դասերին

Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Պատմական ասպարեզ իջնելով անհիշելի ժամանակներից՝ անցել է զարգացման բարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: Գալով հազարամյակների խորքերից՝ հայը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ: Ժամանակն ապացուցել է, որ դարեր շարունակ պետականությունից զրկված հայը հայ է մնացել շնորհիվ իր լեզվի, մշակույթի, հավատի, իր ավանդական արժեքների և, ինչու չէ, նաև պահպանողականության:

Պատմական հարուստ ժառանգության իմացությունն ու պահպանումը ամեն մի հայի, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունն է:

Գրականության դասավանդման հիմնական նպատակներից պետք է համարենք բարոյական արժեքների ուսուցանումը և ազգապահպանությունը, համամարդկային արժեքներն ընդունելով՝ սեփականը սիրելն ու հարգելը:

Մենք հայ ենք, և սա արդեն ասում է ամեն ինչ: Եվ պետք է մնանք հայ. ուրիշ ճանապարհ չունենք:

Հեռու եմ ազգային սնապարծությունից, որովհետև դա համարում եմ մեր դժբախտությունների պատճառներից առաջնայինը: Սակայն սրտի ցավով եմ տեսնում, որ օր օրի կորցնում ենք մեր դեմքը, դիմագիծը, արժանապատվությունը, հպարտությունը:

Մեզ համար միշտ էլ բարձրագույն արժեք են եղել ընտանիքը, ծնողը, երեխան, հարգանքն ու սերը ընտանիքի մեծերիի նկատմամբ: Հենց մեծեր, ոչ թե մեծահասակներ:

Իսկ մեր մեծերն իրենց անմահ ստեղծագործություններով հենց այդ են ուսուցանում: Ահա, ուսումնասիրում ենք Համո Սահյանի անկրկնելի <<Իրիկնահաց>>-ը, որը ընտանիքի, հարգանքի, լուռ սիրո սքանչելի պատկեր է:

21-րդ դարում նահապետական գերդաստանի քարոզ չեմ կարդում, սակայն պետք է երեխայի մեջ դաստիարակել այդ սերը, հարգանքը:

Մաքուր, անարատ սիրո սքանչելի օրինակ է նաև Զորյանի <<Պապն ու թոռը>>, որը ևս այդ արժեքների դաստիարակության գործընթացում, կարծում եմ, իր մեծ դերը կարող է ունենալ:

Ավելացնենք նաև Մուրացանի <<Գևորգ Մարզպետունի>> պատմավեպում ընտանիքի դերի արժևորումը ամուր հայրենիք ունենալու գործում:

Այսօր, երբ դասերի ընթացքում, դասղեկի ժամերին անանուն հարցումների ընթացքում փորձում ենք անդրադառնալ երեխա-ընտանիք հարաբերություններին, ցավով ենք տեսնում, որ մարդիկ աստիճանաբար օտարվում են իրարից: Ամեն մեկը պաշտպանում է իր <<անձնական տարածքը>>, իր եսն ու անհատականությունը: Այդ գործընթացում մեծ դեր են խաղում ոչ միայն <<դարի առաջադեմ զավակը>> լինելու <<պահանջմունքները>>, սոցիալական ցանցերը, այլև օր օրի ահագնացող անտարբերությունը, անհանդուրժողականությունը:

Եվ, ինչպես մեծ ցավով ահազանգում էր Վարդգես Պետրոսյանը, <<Մեր սեղանների գլուխները աստիճանաբար դատարկվում են>>…

Վստահ եմ, որ գրականության դասերին այս ամենի ճիշտ արժևորումը դրական արդյունքներ կարող է տալ:

Անչափ կարևորում եմ հայրենասիրության և ազգային արժանապատվության դաստիարակումը գրականության դասերին: Այսօր, երբ աշխարհաքաղաքացի դառնալն է սերունդների համար գերխնդիր, ուսուցիչներիս համար հայապահպանությունը պետք է դառնա առաջնահերթություն: Եթե լինեինք երկու միլիարդ՝ չինացիների պես, թերևս այս հարցը քննարկման առարկա չէի դարձնի: Սակայն այս օրհասական պահերին մենք ազգովին նահանջում ենք: Հայրենիքն ենք կորցնում, հայրենիքի հետ միասին՝ լեզուն, և այս լուսավոր դարում ձուլվում հոգեպես:

Սովորողների մեջ պետք է ոչ թե խրախուսել ուռա-հայրենասիրությունը, այլ իրականը: Սովորողը պետք է մեր հերոսների կերպարների միջոցով հայ դաստիարակվի: Նա պետք է հասկանա, որ հայրենասիրությունը միայն զենքը ձեռքին սահմանին կանգնելը չէ, այլ լեզուն սիրելը, տունը սիրելը, քո քաղաքն ու երկիրը շենացնելը, որ հերոս կարող ես լինել ոչ միայն կռվի դաշտում: Եվ որ՝ ինչ-որ աղանդի հարելով կամ գումար վճարելով բանակից ազատվելը, մեղմ ասած, բարոյական չէ:

Մեր նպատակին հասնելու համար, փառք Աստծո, ունենք ոչ միայն հսկայական քանակությամբ բարձրորակ գրական երկեր, այլև կարող ենք հենց գրողների կենսագրություններից դրվագներ ներկայացնել, <<հեղինակի աթոռ>>

մեթոդի միջոցով անդրադառնալ մեծերի հայրեմանվեր գործունեությանը /Թումանյան, Տերյան, Իսահակյան…/:

Լեզվի և ազգային մշակույթի գերակայության արժևորումը հրաշալի է ստացվում Աբովյան ուսումնասիրելիս: Նրա կրակված սրտի անկեղծ ու սրտառուչ ճիչը անտարբեր չի թողնում ոչ մի աշակերտի: Մեծ Լուսավորչի անձնական օրինակով, Մաշտոցի սխրանքով, մյուս Հայ հայերի նվիրումը նրանց ներշնչելով, նրանց զգացմունքների վրա ազդելով՝ աստիճանաբար կարող ենք հասնել լեզվասիրության:

Մի օրինակ իմ բերեմ իմ հաջողված փորձից: Իբրև քրիստոնյա՝ իմ դասղեկական դասարանում /նրանք այժմ սովորում են 9-րդ դասարանում/ օրն սկսում էինք Տերունական աղոթքով: Դասարանում ունենք <<Եհովայի վկաներ>> աղանդին հարող աշակերտ, որը մեր աղոթքի ընթացքում դուրս էր գալիս դասասենյակից:

Երբ կազմակերպեցինք էքսկուրսիա Ժամանակակից արվեստների թանգարան, երեխաներն իմացան, որ մեր այբուբենը նույնպես աղոթք է: Դրանից հետո երեխաների խնդրանքով, բոլորս միասին, ամեն օր օրն սկսում ենք Այբ, բեն, գգիմ-ով: Մասնակցում են բոլորը: Ասեմ նաև, որ երեխաները ավելի մեծ հարգանք են տածում մեր լեզվի հանդեպ, սոցիալական ցանցերում այժմ գրում են միայն հայերեն:

Սովորողների ազգային արժանապատվությունը ևս համարում եմ անչափ կարևոր: Հունական Անթեռսից մինչև Վասակ Մամիկոնյան և Արշակ Երկրորդ, <<Հայրենի հող>> և <<Մի խառնեք մեզ ձեր վայրի…>> ՝սովորողը պետք է զգա հայրենի հողի պարգևած զորությունը, այդ հողին կանգնելու արժանիք ունենալը կարևորելը: <<Որտեղ հաց, էնտեղ կաց>> սկզբունքը, գաղթական, թափառական հայի հոգեվիճակին հարմարվողականությունը սպանում է մեր եսը, մեր դիմագիծը:

Մյուս կարևոր արժեքները, որ կարող ենք սերմանել գրականության դասերին, մարդասիրությունն է, մարդու նկատմանբ մարդ լինելը, հանդուրժողականությունը:

<<Մարդկությանը սիրելը հեշտ է, փորձիր հարևանիդ սիրել>>,-գրել է Իլյա Իլֆը:

Հետհեղափոխական և հետպատերազմյան տարիներին մի տեսակ անհանդուրժողականության աճ է նկատվում բոլորիս մոտ, հատկապես՝ դեռահասների: Մարդիկ դադարում են ապրումակցել, տեսնել և զգալ դիմացինի ցավը, խնդիրները, օգնության ձեռք մեկնել: Երեխաների մոտ ձևավորվում է

չարություն, դիմացինին ցավ պատճառելու միտում: Եվ այդ ամենը՝ կեղծ մարդասիրության քողի տակ:

Այս դեպքում էլ կարող է օգնության գալ գրականությունը: Սևակի <<Ոսկին վերստին ոսկի է մնում>> ստեղծագործությունն իր նախապատմությամբ, Սահյանի հիանալի բանաստեղծությունները, Թումանյանի անմահ քառյակները, էլ չեմ ասում՝ Նարեկացին, ունեն հսկայական նշանակություն:

Իհարկե, հիմնական դպրոցի համար ոչ ծրագրային ստեղծագործությունները, գրականությանը հատկացված քիչ ժամաքանակը կարող ենք համարել խոչընդոտ, սակայն մեզ կարող են օգնության հասնել դասղեկի ժամերը, արտադասարանական միջոցառումները:

Էլի մի օրինակ բերեմ իմ փորձից: 2006 թվականն էր: Մեր դպրոցը դեռ միջնակարգ էր, և կոնֆլիկտային իրավիճակ էր ստեղծվել զուգահեռ 10-րդ դասարանների սովորողների միջև: Պատճառների մասին չեմ խոսի: Իհարկե, բոլոր օղակներն անում էին ամեն ինչ իրավիճակը շտկելու համար, սակայն մեզ ամենից շատ օգնեց գրականության ուսուցիչներիս կազմակերպած միջոցառումը: Մենք՝ երկու դասարաններում դասավանդող ուսուցիչներս, հսկայական դժվարության գնով կարողացանք համոզել երեխաներին և նրանց հետ կազմակերպեցինք միջոցառում <<Մարդը>> խորագրով: Բանաստեղծություններն ընտրել էին երեխաները, երգերը, խոսքերը՝ նույնպես: Յուրաքանչյուր փորձը և քննարկում էր, և դերախաղ, և հոգեբանական սեմինար:

Վերջնական արդյունքում ունեցանք հրաշալի միջոցառում, համերաշխ դասարաններ, հայ և համաշխարհային պոեզիայի ուսումնասիրություն և փոխադարձ հասկացվածություն և հարգանք:

Բարոյական արժեքներն ընկալելու, արժևորելու, կյանքում կիրառելու հսկայական պաշար են տալիս առակներն ու հեքիաթները: Նրանցից յուրաքանչյուրի ճիշտ և տեղին մատուցումը, համապատասխան մեթոդների կիրառմանբ ներկայացումը հրաշալ միջոց են սովորողի արժեհամակարգը ձևավորելու համար: Երեխաները մեծ ոգևորությամբ են մասնակցում դերախաղերին, բեմականացնում առակներն ու հեքիաթները, ապա քննարկում, վերլուծում, արժևորում:

Գրական դատերը, բանավեճերը ևս մեծ արդյունք կարող են ունենալ սովորողների արժեհամակարգի ձևավորման գործում:

Բարոյական արժեքների ձևավորման և պահպանման գործում անփոխարինելի են առած-ասացվածքները, որոնք իրենց մեջ խտացնում են ժողովրդի դարավոր փորձը, իմաստնությունը, բարոյականությունը, արժեհամակարգը:

Փորձը ցույց է տալիս, որ դրանց ճիշտ, ժամանակին և տեղին ուսումնասիրությունը և ուսուցանումը կարող է լինել շատ արդյունավետ:

Գրականության դասը պլանավորելիս, կարծում եմ, նախ և առաջ պետք է կարևորել բարոյական արժեքները, որովհետև ցանկացած գիտելիք անիմաստ է դառնում, եթե այն չի ծառայում Մարդ դաստիարակելուն:

Յուրաքանչյուր ուսուցիչ, մտնելով դասարան, պետք է կրթի և դաստիարակի ազգային և համամարդկային արժեքներով: Չափազանց բարդ և պատասխանատու աշխատանք է, սակայն դա է հենց մեր կոչումը: Մենք իրավունք չունենք նահանջելու կամ թուլանալու:

Եզրակացություն

Ուսուցչի աշխատանքը զուտ աշխատանք չէ որպես այդպիսին: Այն մարդ կրթելու և դաստիարակելու առաքելություն է: Դասարան մտնելով՝ դու նախ և առաջ այդ առաքելությունը պետք է իրականացնես:

Բարդ է, որովհետև գործ ունես տարբեր անհատականությունների, տարբեր ընտանիքների ներկայացուցիչների, տարբեր արժեքներ իրենց մեջ կրող անձնավորությունների հետ: Ամեն րոպե քո դեմ պայքարում են փողոցը, նյութականը, աշխարհը, տեղեկատվական դաշտը, մեդիան:

Սակայն դու ուժեղ ես քո արժեքներով, քո հարուստ մշակութային ժառանգությամբ, և ամեն օր մի փոքրիկ սերմ ցանելով՝ հաստատ կհասնես հաջողության:

Ուրիշ տարբերակ չունես:

Օգտագործված գրականության ցանկ

1. Յու. Ամիրջանյան, « Բարոյագիտական զրույցներ», 1988թ.
2. Բարոյագիտական բառարան, 1985թ.
3. Ա.Ահարոնյան, «Վարքի կուլտուրա», 1981թ.
4. Յու. Բորև, «Գեղագիտություն», 1982թ.
5. https://minimanual.com/hy/valores-morales/https://minimanual.com/hy/valores-morales/